Շղթայակիր Առաջնորդ ընտրուած էր, անշուշտ, Ս. Կարապետի, իբր Կոլոտին երիցագոյնը։

Կոլոտ իր ընկերը "հայր" տիտղոսով կը պատուէ միշտ իբր Առաջնորդ Ս. Կարապետի։[1]

ԿՈԼՈՏ Ի Կ. ՊՈԼԻՍ

"Եւ վարդապետաց Նորին առ Նոյն ժամանակին, Եպիսկոպոսն Խաչակ, ընկալաւ բազում սիրով զմիւս նուաստութիւն եւ յորդորեաց զաստուածասէր ժողովուրդն, որք եաւն զզորմութիւն լիակիր եւ զբազում յիշատակ զարդուց Սրբոյ Տաճարին, որովք եւ աղատեցաւ սուրբ վանքն ի բազմատոկոս պարտուցն։" (Կոլոտ։)

Ս. Կարապետի պարտքերը դիւրաբարդուած էին, մանաւանդ 1709ի երկրաշարժէն ետքը։

Կոլոտ, Շղթայակրի կարգադրութեամբ եւ յորդորով, Կ. Պոլիս գնաց շրջաբերձ ճամբորդութեամբ մը (1712—1713) "ժողովել ողորմութիւն յաստուածասէր անձանց առ ի թեթեւացուցանել պարտուցն ծանրութիւն"։

Պոլսոյ պատրիարքը Ապուչեխցի Սահակ Եպիսկոպոս (1708—1714), խելացի, հեռատես եկեղեցական մը, կրցաւ գնահատել Ս. Կարապետի նուիրակին արժանիքը։ Մեծապէս օգնեց եւ դիւրացուց Կոլոտին պաշտօնը յորդորելով ժողովուրդը, որոնք լիաբերան տուին իրենց լումաները, նուիրեցին թանկագին սպասներ ու անօթներ, "որովք եւ աղատեցաւ սուրբ վանքն ի բազմատոկոս պարտուցն"։ Եւ այնչափ շքեղցաւ, պայծառացաւ Ս. Կարապետ "որ չէր յառաջ բնաւին"։

---

1 Իսկ "Լուսաւորութիւն Խոստովանութեան" գրքի յիշատակարանին մէջ՝ Վարդան Բաղիշեցիէն ետքը կ'արձանագրէ "զդոռոբիրանն իմ զՏէր Գրիգոր սրբանունդ վարդապետն, զայրն աստուածային եւ զնգնազգեաց անձն երեւելի։"